ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

հեռ. /094/ /80-53-63/

/0231/ /6-38-10/

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ ОБЛОСТЬ
МЕРИЯ МРГАСТАНА

Հ.Հ. ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Մուտքագրված գրասենյակում
մ/հ 1/D 20/12 2012

ՀԱՐԳԵԼԻ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Ձեզ ենք ներկայացնում Հ. Հ. Արմավիրի մարզի Մրգաստանի գյուղական համայնքի ավագանու 12 դեկտեմբերի 2012թ. կայացած թիվ 1/1 արտահերթ նիստի որոշումները:

Առդիր՝ 19 թերթ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

1/583-12
20 12 2012թ.

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի ԹԻՎ 1/1 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ
ԹԻՎ 13 ՈՐՈՇՄԱՆ

ՕՐԱԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՆԻՍՏԻ

13. ԱՎԱԳԱՆՈՒ 2012Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի ԹԻՎ 1/1 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ս. ՂԱՐԻԲՅԱՆ/

14.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ/

15.ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ս. ՂԱՐԻԲՅԱՆ/

16.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ/

17.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012Թ. ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ/

18. ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԳՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ/

19.ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԽՐԱԽՈՒՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ/

20. ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՄԱՍ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ Տ-3-32 Մ-3 ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՏՎԱԾԸ ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀ ԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ/

21.ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ/

22. ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՄԱՆՈՐՅԱ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի գյուղական համայնք, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

ՈՐՈՇՈՒՄ
«12» դեկտեմբերի 2012 թվական N 13

ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի չորրորդ մասով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստանի գյուղական համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 1/1 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Ավագանու անդամներ | 5կողմ | 0դեմ | 0 ձեռնպահ |
|---|---|---|---|
| Մ. Հարությունյան | | | |
| Հ. Հովհաննիսյան | | | |
| Հ. Ասատրյան | | | |
| Ա. Ասատրյան | | | |
| Ա. Հովակիմյան | | | |

ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

գ. Մրգաստան
2012թ. դեկտեմբերի 12

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի գյուղական համայնք, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

ՈՐՈՇՈՒՄ
«12» դեկտեմբերի 2012 թվական N 14-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2012Թ. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 16-ի առաջին մասի 18-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստանի գյուղական համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը 2013թ. համար՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող 10-րդ օրը:

| Ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Մ. Հարությունյան | | | |
| Հ. Հովհաննիսյան | | | |
| Հ. Ասատրյան | | | |
| Ա. Ասատրյան | | | |
| Ա. Հովակիմյան | | | |

ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2012թ. դեկտեմբերի 12
գ. Մրգաստան

# ԻՐԱՎԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿՈՂՄԻՑ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԻ ՆԱԽԱԳԾԻ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՍՏՈՒԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հ.Հ. Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի ղեկավար Ռաֆիկ Խաչատրյանս, ղեկավարվելով « Իրավական ակտերի մասին» Հ.Հ. օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ ստուգել Հ.Հ. Արմավիրի մարզի Մրգաստանի գյուղական համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 1/1 նիստի « Մրգաստան համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2013 թվականի դրույքաչափերի հաստատման մասին» N14-Ն որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը:Ստուգմամբ պարզեցի, որ տվյալ ակտի ընդունումը պայմանավորված է «Տեղական ինքնակառավարման մասին» Հ.Հ. օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի պահանջով:

Ակտի ընդունումը ուղղված է տեղական տուրքերի և վճարների գանձումների, համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների միջոցով համայնքի բյուջեն հզորացնելու և համայնքի զարգացմանը նպաստելուն:

Ելնելով վերոգրյալից՝ Հ.Հ. Արմավիրի մարզի Մրգաստանի գյուղական համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 12 -ի թիվ 1/1 նիստի «Մրգաստան համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2013 թվականի դրույքաչափերի հաստատման մասին» N14-Ն որոշումը համապատասխանում է գործող օրենսդրության պահանջներին:

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌԱՖԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2012ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի ԹԻՎ 1/1 N 14-Ն
ՈՐՈՇՄԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝ հիմնական օբյեկտների համար՝

ա)մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի,այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 7500 (յոթ հազար հինգ հարյուր դրամ)

բ)սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա)201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 /տասնհինգ հազար/ դրամ.

բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000 /քսանհինգ հազար/ դրամ.

բգ)1001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30000 /երեսուն հազար/ դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1000 /մեկ հազար/ դրամ.

դ)20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2000 /երկու հազար/ դրամ.

2.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված է ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա)չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1000 /մեկ հազար/ դրամ.

բ)բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների

(այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա,բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն որոշման հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

գ)նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար՝ տեղական տուրքը սահմանել 5000 /հինգ հազար/ դրամ:

4.Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանել՝

ա)ոգելից խմիչքների վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ:

բ)ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար 2000 /երկու հազար/ դրամ:

5.Համայնքի տարածքում՝

ա)բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր օրվա համար սահմանել 350 դրամ.

բ)հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 150 000/մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ:

6.Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներով պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 50. 000 /հիսուն հազար/ դրամ:

7.Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա սահմանել՝

ա)առևտրի օբյեկտների համար՝ 35 000 /երեսունհինգ հազար/ դրամ.

բ)հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50 000 / հիսուն հազար/ դրամ.

գ)բաղնիքների (սաունաների) համար՝ 200 000 /երկու հարյուր հազար/ դրամ.

դ)խաղատների կազմակերպման համար՝ 500 000 /հինգ հարյուր հազար/ դրամ.

ե)շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250 000 /երկու հարյուր հիսուն հազար/ դրամ

զ)վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000 /հարյուր հազար դրամ/ դրամ.

8.Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել՝

ա)ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000/երկու հազար/ դրամ.
բ)թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ
գ)այլ արտաքին գովազդի համար՝ 1000/մեկ հազար/ դրամ.
դ)ծխախոտի արտաքին գովազդի համար՝ 3000 /երեք հազար/ դրամ
ե)դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 /յոթ հարյուր/ դրամ.
9.Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 1000 /մեկ հազար/ դրամ.
10.Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների ) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 5000 /հինգ հազար/ դրամ:
11.Գյուղապետարանի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար սահմանել մասնակիցներից վճար 3000 /երեք հազար/ դրամ:
12.Գյուղապետարանի տնօրինության տակ գտնվող հողերը հատկացնելո, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար մատուցած ծառայությունների դիմաց վճար սահմանել 1000/մեկ հազար/ դրամ:
13.Համայնքի կողմից մատուցվող ծառայություններից «Աղբահանության և սանիտարական մաքրման» մասին Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջով համայնքի ավագանու կողմից սահմանվել է աղբահանության վճար, որը համայնքի բյուջե գանձվող պարտադիր գանձույթ է:2013թվականի աղբահանությունը կազմակերպելու համար ավագանու որոշմամբ սահմանվել է աղբահանության վճարի հետևյալ դրույքաչափը՝
ա/Աղբահանության դիմաց յուրաքանչյուր շնչի համար, ըստ հաշվառված անձանց քանակի համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և /կամ/ բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ առավելագույնը ամսական 50 /հիսուն/ դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի գյուղական համայնք, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

ՈՐՈՇՈՒՄ
«12» դեկտեմբերի 2012 թվական N 15

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի

16-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստանի գյուղական համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանել՝ 160 000 /հարյուր վաթսուն հազար/ դրամ:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Մ. Հարությունյան | | | |
| Հ. Հովհաննիսյան | | | |
| Հ. Ասատրյան | | | |
| Ա. Ասատրյան | | | |
| Ա. Հովակիմյան | | | |

ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2012թ. դեկտեմբերի 12
գ. Մրգաստան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի գյուղական համայնք, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

ՈՐՈՇՈՒՄ
«12» դեկտեմբերի 2012 թվական N 16-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ
ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 16-ի առաջին մասի 26-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել՝ համայնքի ղեկավարի աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող 10-րդ օրը:

| Ավագանու անդամներ | Կողմ | (0)դեմ | (0) ձեռնպահ |
|---|---|---|---|
| Մ. Հարությունյան | | | |
| Հ. Հովհաննիսյան | | | |
| Հ. Ասատրյան | | | |
| Ա. Ասատրյան | | | |
| Ա. Հովակիմյան | | | |

ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

գ. Մրգաստան
2012թ. դեկտեմբերի 12

Հավելված
Արմավիրի մարզի Մրգաստանի
գյուղական համայնքի ավագանու
2012 թվականի դեկտեմբերի 12-ի
թիվ 1/1 արտահերթ նիստի թիվ 16 որոշման

## 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատակիցների թվաքանակը՝ 13
2.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը

| հ/հ | Պաշտոնի անվանումը | Պաշտոնի ծածկագիրը | դրույքը | 2013թ.-ին հաստատված դրույքաչափը (հազար դրամ) |
|---|---|---|---|---|
| 1 | Համայնքի ղեկավար | | 1 | 187,0 |
| 2 | Համայնքի ղեկավարի տեղակալ | | 1 | 131,4 |
| 3 | Աշխատակազմի քարտուղար | 1.2-1 | 1 | 124,1 |
| 4 | Առաջատար մասնագետ | 3.1-1 | 1 | 107,5 |
| 5 | Առաջատար մասնագետ | 3.1-2 | 1 | 107,5 |
| 6 | Առաջատար մասնագետ | 3.1-3 | 1 | 107,5 |
| 7 | 1-ին կարգի մասնագետ | 3.2-1 | 1 | 90,2 |
| 8 | 1-ին կարգի մասնագետ | 3.2-2 | 1 | 90,2 |
| 9 | Գրադարանավարուհի | | 1 | 78,6 |
| 10 | գինվորական մասով կազմակերպիչ | | 1 | 84,4 |
| 11 | վարորդ | | 1 | 55,5 |
| 12 | Հավաքարար | | 1 | 50,5 |
| 13 | Պահակ | | 1 | 67,9 |
| | Ընդամենը | | | 1282,3 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի գյուղական համայնք, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
2013Թ. ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՈՐՈՇՈՒՄ
«12» դեկտեմբերի 2012 թվական N 17-Ն

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 16-ի առաջին մասի 3-րդ կետով, 54-րդ հոդվածով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի երկրորդ մասով և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ և 33-րդ հոդվածներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստանի գյուղական համայնքի 2013թվականի բյուջեն.
եկամուտների գծով՝ 25259.1 հազար դրամ,
ծախսերի գծով՝ 25259.1 հազար դրամ,
դեֆիցիտը /պակասորդ/ 0,0 հազար դրամ՝ համաձայն հավելվածի:
2.Հաստատել՝ համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների համաձայն՝ հատված 1-ի:
3.Հաստատել՝ համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական դասակարգման՝ համաձայն հատված 2-ի:
4. Հաստատել՝ համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 3-ի:
5. Հաստատել համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը /պակասորդը/՝ համաձայն հատված 4-ի:
6.Հաստատել՝ համայնքի բյուջեի դեֆիցիտի /պակասորդի/ ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները՝ համաձայն հատված 5-ի:

7. Հաստատել՝ համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 6-ի:
8.Հիմք ընդունելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ կետը, թույլատրել՝ 2013թվականի բյուջեով նախատեսված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումները մինչև հայտարարված նպատակային մրցույթների արդյունքում պայմանագրերի կնքումը, իրականացնել մեկ անձից գնման եղանակով:
9.Թույլատրել՝ համայնքի ղեկավարին 2013թ. բյուջեի կատարման ընթացքում գործառնական և տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածներում վերաբաշխումներ կատարելու համար սահմանել՝ 50% չափաքանակ:
10.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող 10-րդ օրը:

| Ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Մ. Հարությունյան | | | |
| Հ. Հովհաննիսյան | | | |
| Հ. Ասատրյան | | | |
| Ա. Ասատրյան | | | |
| Ա. Հովակիմյան | | | |

ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2012թ. դեկտեմբերի 12
գ. Մրգաստան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի գյուղական համայնք, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

ՈՐՈՇՈՒՄ
«12» դեկտեմբերի 2012 թվական N 18

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 16-ի առաջին մասի 19-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Սահմանել՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստանի գյուղական համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարները՝
ա/աղբահանության դիմաց յուրաքանչյուր շնչի համար, ըստ հաշվառված անձանց քանակի համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և /կամ/ բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ առավելագույնը ամսական 50 /հիսուն/ դրամ:
2.Առանձին տողով ներկայացնել տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին հավելվածում:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Մ. Հարությունյան | | | |
| Հ. Հովհաննիսյան | | | |
| Հ. Ասատրյան | | | |
| Ա. Ասատրյան | | | |
| Ա. Հովակիմյան | | | |

ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2012թ. դեկտեմբերի 12
գ. Մրգաստան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի գյուղական համայնք, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

ՈՐՈՇՈՒՄ
«12» դեկտեմբերի 2012 թվական N 19

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԽՐԱԽՈՒՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Աշխատանքային օրենսգրքի» հոդված 219-ի առաջին մասի 2-րդ կետով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստանի գյուղական համայնքի ղեկավար՝ Ռաֆիկ Խաչատրյանին խրախուսել միանվագ դրամական պարգևատրումով:
2.Խրախուսանքի չափ սահմանել՝ 100 000 /մեկ հարյուր/ հազար դրամ:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Մ. Հարությունյան | | | |
| Հ. Հովհաննիսյան | | | |
| Հ. Ասատրյան | | | |
| Ա. Ասատրյան | | | |
| Ա. Հովակիմյան | | | |

ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2012թ. դեկտեմբերի 12
գ. Մրգաստան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի գյուղական համայնք, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

ՈՐՈՇՈՒՄ
«12» դեկտեմբերի 2012 թվական N 20

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՄԱՍ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ Տ-3-32 Մ-3 ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՏՎԱԾԸ ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀ ԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 16-ի առաջին մասի 20-րդ կետով և հիմք ընդունելով Արմավիրի մարզպետի 24 հոկտեմբերի 2012թ. թիվ 01/04.1/3625-12 գրությունը

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ

1.Թույլատրել՝Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստանի գյուղական համայնքի սեփականություն հանդիսացող ավտոմոբիլային ճանապարհի Տ-3-32 Մ-3 Շահումյան հատվածի մեկ /1կմ./ դարձնել մարզային ենթակայության:
2.Համայնքի ղեկավարին իրականացնել՝ սույն որոշումից բխող իրավական գործառույթները:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Ավագանու անդամներ | 5կողմ | 0դեմ | 0 ձեռնպահ |
|---|---|---|---|
| Մ. Հարությունյան | | | |
| Հ. Հովհաննիսյան | | | |
| Հ. Ասատրյան | | | |
| Ա. Ասատրյան | | | |
| Ա. Հովակիմյան | | | |

ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2012թ. դեկտեմբերի 12
գ. Մրգաստան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի գյուղական համայնք, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

ՈՐՈՇՈՒՄ
«12» դեկտեմբերի 2012 թվական N 21

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 16-ի առաջին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ սոցիալապես անապահով ընտանիքներին, դրամական աջակցություն ցուցաբերելու նպատակով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Ռոզա Հարությունյանին, որպես զոհված ազատամարտիկի մայր, միայնակ թոշակառու հատկացնել՝ վաթսուն հազար /60.0/ դրամ:
2.Շավարշ Վարդանյանին, որպես սոցիալապես անապահով հատկացնել՝ երեսուն հազար /30.0/ դրամ:
3.Սկրտիչ Եղիազարյանին, որպես սոցիալապես անապահով հատկացնել՝ քսան հինգ հազար /25.0/ դրամ:
4.Վաչական Մարտիրոսյանին, որպես սոցիալապես անապահով հատկացնել՝ քսան հազար /20.0/ դրամ:
5.Ամալյա Սահակյանին, որպես սոցիալապես անապահով հատկացնել՝ քսան հինգ հազար /25.0/ դրամ:
6.Նելլի Համբարձումյանին, որպես բազմանդամ ընտանիքի մայր հատկացնել՝ քսանհինգ հազար /25.0/ դրամ:
7.Գևորգ Կնյազյանին ընտանիքին աջակցություն ցուցաբերելու նպատակով հատկացնել՝ երեսուն հազար /30.0/ դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի գյուղական համայնք, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

ՈՐՈՇՈՒՄ
«12» դեկտեմբերի 2012 թվական N 22

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՄԱՆՈՐՅԱ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին օրենքի» հոդված 16-ի առաջին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստանի գյուղական համայնքում ամանորյա միջոցառումներ կազմակերպելու համար՝ հատկացնել 60 000 /վաթսուն հազար/ դրամ:
2.Հանձնաժողովին՝ կազմակերպել միջոցառումները և զեկուցել համայնքի ղեկավարին:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Մ. Հարությունյան | | | |
| Հ. Հովհաննիսյան | | | |
| Հ. Ասատրյան | | | |
| Ա. Ասատրյան | | | |
| Ա. Հովակիմյան | | | |

ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2012թ. դեկտեմբերի 12
գ. Մրգաստան